

**ԿՅԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԶՊԱՀԱՆՁՎԱԾ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ.
ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ***

ԿԱՐԱԳՅՈՉՅԱՆ Հ. Ս.

[ԱՄՆ, Կալիֆորնիայի (Լոս Անջելես) համալսարան]

«Էքսուիթաբլ»-ի և «Սթար»-ի կողմից որդեգրված հիվանդագին մարտավարությունը ի հայտ է գալիս Հովակիմ Գևորգի Մասաթյանի վերապրած երկու երեխաների կողմից ներկայացված պահանջահայեցերի առնչությամբ: Մասաթյանն ուներ կյանքի ապահովագրման երկու փաստաթուղթ, առաջինը՝ Կյանքի ապահովագրման «Էքսուիթաբլ» ընկերությունից (պայմանագրի համարը՝ 1626139,6 հազար ֆրանկ) և երկրորդը՝ Լոնդոնի Սթար աշուրանս ընկերությունից (պայմանագրի համարը՝ 114645,3 հազար ֆրանկ):

1915 թ. հոկտեմբերի 31-ին «Էքսուիթաբլ»-ին ուղղված նամակում Աբրահամ Ի. Էլկուսը (նա փոխարինեց դեսպան Հ. Մորգենթաուին) տեղեկացրեց Նյու Յորքում գլխավոր գրասենյակներին, որ ինքը ստացել է արտոնված և մահացած համարվող Հ. Մասաթյանի վերապրած երկու երեխաների պայմանագրով սահմանված պահանջահայեց: Իր նամակի մեջ Էլկուսը պարզաբանում էր, որ նման կարգի պահանջատերերի համար անհնարին է ներկայացնել մահը հաստատող իրավական ապացույց: Իմանալով, որ նման կարգի իրավական փաստաթուղթ երբեք հնարավոր չէ ներկայացնել, ամերիկյան դիվանագետը դուրս եկավ սովորական առևտրական դիվանագիտության շրջանակից՝ «Էքսուիթաբլ»-ին գրելով հետևյալը. «Սամսունի՝ Թուրքիայում ամերիկյան հյուպատոսական աշխատակիցը խնդրել է դեսպանատնից, թե հնարավոր չէ՞ արդյոք հաստատելու Հովակիմ Գևորգի Մասաթյանի 6000 ֆրանկի համար՝ 1626139 պայմանագիրը, երեխաներին պայմանագրի ներքո թույլ տալով ձեռք բերել գումարը՝ հաշվի առնելով այն փաստը, որ պրն. Մասաթյանը եղել է արտոնվածների շարքում և համարվում է մահացած: Դեսպանատունը երախտապարտ կլինի իմանալու ձեր ընկերության վերաբերմունքը այն արտոնված հայերի ժառանգների նկատմամբ, որոնց մահվան վերաբերյալ ներկայումս որևէ բացարձակ ապացույց չի կարող տրամադրվել: Դեսպանատունը կցանկանա իմանալ նաև, թե... ձեր ընկերությունից փոխառություններ ստանալու համար ձեռնարկվեն այն արտոնված հայերի ընտանիքների անդամների կողմից, որոնք գտնվում են ամենաթշվառ պայմաններում»⁴²:

Էլկուսի կարեկցանք առաջացնող նամակը չէր ձգտում «Էքսուիթաբլ»-ի վարչակարգում համակրանք կամ արդարության զգացում առաջացնելու: 1917 թ.

* Հոդվածի սկիզբը տե՛ս հանդեսի 2004 թ. N 1-ում:

⁴² ԱՄՆ-ի դեսպան Աբրահամ Ի. Էլկուսը «Կյանքի ապահովագրման Էքսուիթաբլ ընկերությանը» (այսուհետև՝ «ԿԱԷԸ»), 31 հոկտեմբեր, 1916 թ., *U. S. National Archives, RG 84, file 850.6*.

հունվարի 3-ին դեսպան Էլկուսին հղված նամակում «Էքուիթաբլ»-ի նախագահը վկայակոչում էր երկու կետ, որոնք Մասաթյանի պայմանագրով փոխհատուցում ստանալը դարձնում էին անհնարին: Առաջին, «Էքուիթաբլ»-ի գլխավոր գործադիր աշխատակիցը նշում էր, որ զոհերի պայմանագիրն ուժը կորցրել է 1916 թ. դեկտեմբերի 14-ին, քանի որ ապահովագրվածը չի վճարել ապահովավճարը: Ուժը կորցնելու օրը զոհի՝ 1915 թ. ամռանը Սամսունից տեղահանման ենթարկվելուց 8 ամիս անց էր: «Էքուիթաբլ»-ի նամակը պարզ նշում է, որ Մասաթյանի պայմանագիրը բռնագաղթի ենթարկման պահին ամբողջությամբ ուժի մեջ է եղել: «Էքուիթաբլ»-ի նախագահի վկայակոչած երկրորդ կետը մահվան պաշտոնական վկայականի պահանջն էր: Ծաղրն այն էր, որ «Էքուիթաբլ»-ի նախագահն իր նամակում աներկիմաստ նշում էր, որ ինքը քաջատեղյակ է, որ նման կարգի պահանջահայցերի դեպքում հնարավոր չէ տեղի քաղաքացիական իշխանություններից որևէ պաշտոնական ապացույց ձեռք բերել:

«Թանկագին պրն. Էլկուս,

Մասնավորապես Հովակիմ Գևորգի Մասաթյանի N 1626139 պայմանագրին և, գլխավորապես, աքսորված հայերի կյանքից բխող պահանջահայցերի հետ կապված համապատասխան մահվան ապացույցների ու այսպիսի մարդկանց կյանքի պայմանգրերի առկայությամբ, պայմանագրային փոխառությունների տրամադրման հարցին առնչվող Ձեր հոկտեմբերի 31-ի նամակը ներկայացվել է իմ անձնական ուշադրությանը: Ձեր կողմից հարցադրված հատուկ դեպքի վերաբերյալ ես կարող եմ ասել, որ գործարքը սահմանված ժամկետում 6 հազար ֆրանկի վճարման մասին պայմանագիր է, որը կորցրել է իր ուժը 1916 թ. դեկտեմբերի 14-ին: Պայմանագիրը վերածվեց ժամկետային գործարքի, երբ 1912 թ. (վրիպակ է - Կ. Հ.) դեկտեմբերին նախատեսված ապահովավճար չվճարվեց: Ուստի, եթե հնարավոր է ցույց տալ, որ ապահովագրվածը մահացել է նախքան 1916 թ. դեկտեմբերի 14-ը, իր ունեցվածքի օրինական ներկայացուցչին է հասնում մահվան դիմաց պահանջահայցով նախատեսված 6 հազար ֆրանկ գումարը, բայց եթե մահն առաջացել է 1916 թ. դեկտեմբերի 14-ից հետո, պայմանագրով ոչինչ չի հասնում: Ուստի, Դուք այս օրինակի հիման վրա կտեսնեք, թե որքան անհրաժեշտ է ապահովագրվածի մահվան օրվա արձանագրումը: Ձեր կողմից նկարագրված մահվան դիմաց պահանջահայցերի դեպքերի հետ կապված ընկերությունը կանոնավոր կերպով պահանջում է մահվան ապացույցներ: Դա հանդիսանում է ապահովագրվածի մահվան վայրի քաղաքացիական իշխանությունների կողմից տրված պաշտոնական մահվան վկայականը: Ինչ վերաբերում է աքսորված անձանց պայմանգրի առկայությամբ կյանքի դիմաց պայմանագրային փոխառություններ տրամադրելուն, կարող ենք նմանատիպ պայմանագրերով ապահովագրվող գումարը ստացողի ձևակերպմամբ, լրացուցիչ փոխառության համաձայնագրով փոխառություն տրամադրել: Այնուհանդերձ, նման փոխառությունը չպետք է գերազանցի վճարվելիք անհրաժեշտ ապահովավճարի չափը կամ պայմանագիրը ուժի մեջ պահելու նպատակով ուշացվի փոխառության տոկոսները վճարելը: Այսպիսի համաձայնագրով որևէ կանխիկ փոխառություն չի կարող

տրամադրվել: Եթե մենք առանց համապատասխան երաշխիքի գումար փոխ տանք, տարբեր երկրների ապահովագրությամբ զբաղվող ղեկավար պաշտոնյաների խստագույն քննադատության առարկա կդառնանք...»⁴³:

«Էքսուիթաբլ»-ի պատասխանը զայրացրեց դեսպան Էլկուսին: Իր պատասխան նամակում Էլկուսը պարզաբանում էր, որ «տեղահանությունը», մեղմ ասած, մահ էր նշանակում. Պրն. դատավոր Դեյ, ես ստացել եմ Հովակիմ Գևորգի Մասաթյանի N 1626139 կյանքի պայմանագրին առնչվող Ձեր՝ 1917 թ. հունվարի 3-ի նամակը: Ես ուղարկում եմ նույնի օրինակը Սամսունում մեր հյուպատոսական աշխատակցին: Երախտապարտ եմ Ձեզ՝ գործն անձապես քննարկելու համար: Գրելով 1916 թ. հոկտեմբերի 14-ին՝ մեր հյուպատոսական աշխատակիցն այն տեսակետն է արտահայտել, որ այդ պահին ապահովագրվածը չէր կարող կենդանի լինել, որովհետև 1915 թ. նա «տեղահանվել էր»: «Տեղահանված» այս մարդկանց համար անհնար է պաշտոնական մահվան վկայականներ ստանալ իրենց մահվան վայրերում գտնվող քաղաքացիական իշխանություններից: Ներող եղեք նշելու, որ քանի դեռ համապատասխան վերաբերմունք ունենք ընդհանրապես ընկերության կողմից պայմանագրերով ստանձնած պարտավորությունների նկատմամբ, ի գիտություն ընդունելով այս դասին պատկանող ապահովագրվածների գործին առնչվող բացառիկ հանգամանքները, կարծում եմ, Դուք ի վիճակի կլինեք փրկել նրանց վերապրող ժառանգներին սովամահությունից կամ դաժան զրկանքներից: Դա արդարացի կլինե՞ր»⁴⁴:

Ինչպես նշվեց, Մասաթյանն ուներ 3000 ֆրանսիական ֆրանկի՝ կյանքի ապահովագրման երկրորդ պայմանագիրը «Սթար»-ի հետ: Թուրքիայում ամերիկյան դիվանագետներն այս հարցում նույնպես միջամտեցին հանուն Մասաթյանի վերապրած երեխաների՝ փորձելով ստանալ փոխհատուցվող գումարը: Որպես առաջին քայլ՝ 1916 թ. հոկտեմբերի 31-ին դեսպան Էլկուսը Լոնդոնում ԱՄՆ-ի դեսպանատան միջոցով հարցրեց, թե արդյոք հնարավոր է ստանալ կյանքի ապահովագրման պայմանագրով նախատեսվող գումարը «Սթար»-ից: Վեց ամիս անց, բրիտանական արտաքին գործոց նախարարությունը գրեց հետևյալը. «Չեմ թերացել Նորին մեծության կառավարության իրավասու բաժնին ուղարկել (N 1144) հուշագիրը, որը Ձերդ գերազանցությունը բարի է եղել հաղորդել ինձ անցած ամսի 18-ին՝ հարցնելով, թե արդյոք Լոնդոնի Սթար ապահովագրական ընկերությունը պատրաստ է մահացած համարվող Հովակիմ Գևորգի Մասաթյանին տրված կյանքի ապահովագրման 3 հազար ֆրանկի պայմանագրի դիմաց վճարել, և ընդհանուր առմամբ, ինչպիսի վերաբերմունք է որդեգրվել բրիտանական ապահովագրական ընկերությունների կողմից այն աքսորված հայերի նկատմամբ, որոնց մահվան վերաբերյալ ներկա հանգամանքներում որևէ բացարձակ ապացույց չի կարող ներկայացվել: Պատասխանում պատիվ ունեմ նշելու, որ պատերազմի ընթացքում որևէ թշնամու պայմանագրի դիմաց վճարում չի թույլատրվում իրականացնել. բացառությունը հնարավոր է այս

⁴³ Վ. Ա. Դեյը, «ԿԱԷԸ» դեսպան Աբրահամ Ի. Էլկուսին, 3 հունվարի, 1917, նույն տեղում:

⁴⁴ Դեսպան Աբրահամ Ի. Էլկուսը Վ. Ա. Դեյին, «ԿԱԷԸ», 7 ապրիլ, 1917, նույն տեղում:

երկրում գտնվող անձի նկատմամբ, այսինքն, երբ նպաստ ստացողը այս երկրի մշտական բնակիչ է, կամ պայմանագիրը կնքվել է նախքան պատերազմը այս երկրում բնակվող անձի հետ: Ուստի, ընկերությունը չի թույլատրվում որևէ գումար վճարել Մասաթյանի երեխաներին, անգամ եթե նա պատրաստ է ընդունել մահը»⁴⁵:

Դեսպան Մորգենթաուն երևի առաջինն էր, որ արձանագրեց թուրքական կառավարության դրսևորած այն բացահայտ ջանքերը, որոնք ուղղված էին ստանալու տեղահանության կամ կոտորածների ժամանակ մահացած հայերի կյանքի դիմաց պայմանագրով սահմանված գումարները: 1918 թ. իր հուշերում Մորգենթաուն մեջբերում է ներքին գործերի նախարար, իշխող իթթիհադական կուսակցության ղեկավարներից մեկի Թալեաթի հետ ունեցած բազմաթիվ հանդիպումներից մեկում հնչած հետևյալ երկխոսությունը. «Թալեաթը մի օր ներկայացրեց, որ երբևէ չէի կարող լսած լինել, մի շատ ցնցող խնդրանք: «Նյու Յորք լայֆ»-ի ապահովագրման և Նյու Յորքի «Իքուիթաբլ լայֆ» ընկերությունները տարիներ ի վեր հայերի մեջ նշանակալի գործարքներ էին իրականացրել: Այս մարդկանց կյանքի ապահովագրումը իրենց ունեցվածքը պահպանելու մի փորձ էր:

Թալեաթն ասաց. «Ես ցանկանում եմ, որ դուք ստիպեք ամերիկյան կյանքի ապահովագրման ընկերություններին՝ մեզ ուղարկել իրենց հետ կյանքի ապահովագրման պայմանագրեր ունեցող հայերի ամբողջ ցուցակը: Նրանք մեռել են և չեն թողել գումարը ստացող որևէ ժառանգ: Այդ ամենը, անշուշտ, պատկանում է պետությանը: Պետությունն է այժմ ժառանգորդը: Կանն ք այդ»: Մա արդեն վեր էր ամեն ինչից, և ես կորցրեցի համբերությունս: «Դուք ինձնից որևէ ցուցակ չեք ստանա,- ասացի ես և դուրս եկա»⁴⁶: Գումարների ձեռքբերման թուրքական մարտավարությունն ընդգրկում է երկու փուլ: Առաջին. եվրոպական և ամերիկյան ընկերություններին են հանձնվում ապահովագրված հայերի ցուցակը տրամադրելու խնդրանքի նախարարական պաշտոնական հուշագրերը: Երկրորդ. ներքին գործերի նախարարի հրամանով, ապահովագրված հայերի անունների ձեռքբերման նպատակով, նահանգների բազմաթիվ վայրերում պետք է ստեղծվեն լուծարման հատուկ հանձնաժողովներ:

Ըստ առկա փաստաթղթերի, կյանքի ապահովագրման դիմաց գումարների ձեռքբերման թուրքական պատճառաբանությունը հիմնավորվում էր արքայական հայերի մահվամբ: Անմիջապես այնպիսի իշխանություն ունեցող անձից, ինչպիսին Թալեաթն էր, «բռնագաղթից» քիչ անց եկող այդպիսի հայտարարությունը ժխտում է իրար հաջորդող թուրքական կառավարությունների հետագա բոլոր որակումները, որոնք, մեղմ ասած, որակում են բռնագաղթը որպես «վերաբնակեցում»:

⁴⁵ Վիկտոր Վելեսլին Լոնդոնում ԱՄՆ-ի դեսպանին, 13 դեկտեմբերի, 1916 թ., նույն տեղում:

⁴⁶ *Ambassador Morgenthau's Story, Ann Arbor: Gomidas Institute, 2000, p. 225*: Հ. Մորգենթաուն, 1913-1916 թթ. Թուրքիայում դեսպան լինելու ընթացքում, անձնապես մասնակից էր Թուրքիայում ապահովագրական ընկերությունների և նրանց՝ Ամերիկայի գլխավոր գրասենյակների և Եվրոպայի գլխավոր կետերի միջև հաղորդակցության և նամակագրության կազմակերպման օժանդակմանը: Հ. Մորգենթաունի հուշերում առկա է XX դ. պատմության ամենամուտք դրվագներից մեկի անմիջական և անգնահատելի շարադրանքը:

Ներքին գործերի նախարարի հրամանների հիման վրա, որպես այս հանդգնության մասնակից, 1916 թ. հունվարին Թուրքիայի առևտրի և գյուղատնտեսության նախարարությունը երկրում գործող բոլոր ապահովագրական ընկերություններին ուղարկեց շրջաբերական գրություններ: Կ. Պոլսում շվեյցարական ապահովագրական «Լա Ֆեդերալ» ընկերության աշխատակցի գրած ներքին օգտագործման համար նախատեսվող հուշագրում դրսևորվել է ապահովագրողների զարմանքն ու վրդովմունքը. այստեղ ասված է. «Օսմանյան կառավարությունը հրապարակել է շրջաբերական, որի պատճենը կցվում է ձեզ տեղեկացնելու համար:

Շրջաբերականը Թուրքիայում գործող բոլոր ապահովագրական ընկերություններին է տրամադրվել առևտրի օսմանյան նախարարության կողմից և վերաբերում է աքսորված հայերի հաշիվներին:

Ներքին գործերի նախարարի հրամանով ձեզնից խնդրվում է մեզ փոխանցել ձեր ընկերությունում հայերին պատկանող բոլոր դեպոզիտների, վարկերի և վճարվելիք հաշիվների ցուցակը հետևյալ նահանգներում՝ Ռոդոստո, Ադանա, Ջեբելի Բերեքեթ, Ղոզան, Յոզղաթ, Անգորա, Էրզրում, Բիթլիս, Հալեպ, Անթալիա, Գուեմլեք (Գուեմլիք), Բիլեջիք, Սվազ, Մարզվան, Թոխաթ, Սամսուն, Արդու (Օրդու), Տրապիզոն, Կոնիա, Մամուրեթ Էլ Ազիզ, Իզմիթ, Ադաբազար, Սիվրի-Հիսար, Էսքիշեհիր, Կեսարիա, Դեվելի, Նիզդե, Շապին Կարահիսար, Ուրֆա: Այդ ցուցակները պետք է հանձնվեն նշված վայրերում լուծարման հանձնաժողովների մեր աշխատակիցներին: Նման հանձնաժողովների բացակայության դեպքում ցուցակները պետք է հանձնվեն տեղական իշխանություններին:

Առևտրի և գյուղատնտեսության նախարարության անունից՝ խորհրդրդական՝ Մուստաֆա (ստորագրություն)⁴⁷: «Նյու Յորք լայֆ»-ը և «Իքուիթաբլ»-ը նույնպես ստացան ապահովագրված և աքսորված բոլոր հայերի անվանացանկը հայցող նման գրություններ:

1916 թ. հունվարի 11-ին Կ. Պոլսում «Նյու Յորք լայֆ»-ի ներկայացուցիչը ստացավ Թուրքիայի առևտրի և գյուղատնտեսության կողմից ներքին գործերի նախարարությանը փոխանցված հուշագիրը՝ իրեն տրամադրելու «Նյու Յորք լայֆ»-ում ապահովագրված բոլոր հայերի անվանացանկը⁴⁸: Իմանալով այս պահանջը՝ Փարիզում «Նյու Յորք լայֆ»-ի եվրոպական գլխավոր գրասենյակի ֆինանսական տնօրեն Պ. Դունկանսոնը վրդովվեց ու ապշեց: Նրան պարզ էր, որ թուրքական պահանջին ենթարկվելը կարող է ֆինանսական ծանր կորուստներ պատճառել ընկերությանը: Այս եզրակացությունը հիմնվում էր այն փաստի վրա, որ աքսորված գրեթե բոլոր հայերը մահացած էին: Պայմանավորված աքսորվածների հոծ

⁴⁷ Խորհրդական Մուստաֆան Յուրիխում «Լա Ֆեդերալ ապահովագրական ընկերությանը», 10 մարտ, 1916թ., U. S. National Archives, RG 84, file 850.6. Նամակը ֆրանսերեն է, և անգլերեն է թարգմանել հեղինակը:

⁴⁸ Ֆրանսերեն գրված հուշագիրը նախարարական պաշտոնական թղթակցության 39655/34 համարի ներքո կրում է հետևյալ մակագրությունը. «Հայերի հաշիվների ցուցակների պատրաստման խնդրի վերաբերյալ»: Խորհրդական Մուսթաֆա Շերիֆը «Նյու Յորք լայֆ» ընկերությանը, 11 հունվարի, 1916 թ., U. S. National Archives, R 84, file 850.6.

քանակության անժխտելի փաստով՝ ակնհայտ մրցավազք սկսվեց թուրքական կառավարության և ապահովագրողների միջև՝ գործի մեջ ներդրված կապիտալի ձեռք բերման համար: Թուրքերի համար հանկարծակի ստեղծվեց զոհերի կյանքի ապահովագրման պայմանագրերով թողնված՝ դիզված վիթխարի հարստությունը «ժառանգելու» հնարավորություն: Միաժամանակ, հսկայական գումարների վճարումը լուրջ հարված կհասցնեք «Նյու Յորք լայֆ»-ի դրամական զանգվածին:

Գրեթե անմիջապես որդեգրվեց երկակի մարտավարություն: Առաջինն ընդգրկում էր ժամանակին ապավինելը, հույսով, որ կրքերը մոտակա ժամանակներում կարող են հանդարտվել: Երկրորդը հարգված և լավ կապեր ունեցող ամերիկյան դեսպանի՝ թուրքական բարձրաստիճան ծառայողների հետ ընկերության անունից գործելու մարտավարությունն էր: «Նյու Յորք լայֆ»-ի աշխատակիցը խնդրեց դեսպան Մորգենթաուին տեղեկացնել թուրքերին, որ խնդրանքը դժվար է իրականացնել, որովհետև «հնարավոր չէ որոշել ապահովագրվածի ազգությունը», ուստի, հնարավոր չէ պատրաստել «ապահովագրված հայերի» անվանացանկը: Ափսոսանքը ուղակիորեն հակասում էր Կ. Պոլսում «Նյու Յորք լայֆ»-ի աշխատակցի արած այն հայտարարությանը, որով անվանացանկի տրամադրման թուրքական խնդրանքին ի պատասխան նշվում էր, թե «մեր ընկերության ապահովագրած հայերի» անունները «գտնվում են գլխավոր տնօրինության (Փարիզում գտնվող Եվրոպայի համար պատասխանատու գլխավոր գրասենյակի) մոտ»: Ավելին, «Նյու Յորք լայֆ»-ը խնդրեց դեսպանին տեղեկացնելու թուրքերին, որ խնդրանքը վերջնական քննարկման և որոշման համար փոխանցվել է Նյու Յորքում կազմակերպության գլխավոր գրասենյակ. դա «որոշ ուշացում» պատճառող անհրաժեշտ մի գործընթաց էր: 1916 թ. փետրվարի 18-ին, թուրքական հրամանից հինգ շաբաթ անց, Փարիզում աշխատակից Դունկանսոնը, Թուրքիայում դեսպան Մորգենթաուին հղեց հետևյալը. «Այսու պարփակում եմ Կ. Պոլսում մեր գրասենյակին հասցեագրված առևտրի նախարարության՝ թուրքական որոշ քաղաքներում բնակվող այս ընկերության կողմից ապահովագրված հայերի անվանացանկը պահանջող հաղորդագրի պատճենը: Դրան եմ կցում նաև Կ. Պոլսում մեր գրասենյակի պատասխանի պատճենը:

Մենք, այնուամենայնիվ, այս խնդրով կապվում ենք Նյու Յորքում մեր գլխավոր գրասենյակի հետ: Ներկայումս նամակագրության սահմանափակումների պատճառով, խնդրում եմ բարի լինել ծանուցելու նրանց, որ Ձեզ տեղակացնեն այն բարդությունների մասին, որ կարող են հարուցել իշխանությունները»⁴⁹:

Այս նամակից պարզվում է, որ «Նյու Յորք լայֆ»-ը պատշաճս վերցնում էր գործը Կ. Պոլսում իր անպաշտպան աշխատակցի ձեռքերից և հանձնում քաղաքականապես հզոր ամերիկյան դեսպանին, այն հույսով, որ նրա մոտ գործը մոռացության կմատնվի: «Նյու Յորք լայֆ»-ը Փարիզում ԱՄՆ-ի դեսպան Վ. Ջ. Շարպի միջոցով նամակը փոխանցեց Մորգենթաուին:

⁴⁹ Փարիզում «Նյու Յորք լայֆ»-ից՝ Դունկանսոնը Կ. Պոլսում դեսպան Մորգենթաուին, 18 փետրվարի, 1916, նույն տեղում:

ԱՄՆ-ի պետական և «Նյու Յորք լայֆ»-ի սեփական արխիվների իրար լրացնող փաստաթղթերը ցույց են տալիս, որ ընկերությունը կարողացավ չենթարկվել իրենց հաճախորդների անունները տրամադրելու թուրքական պահանջին: Ապահովագրված հայերի անունները պահանջող հուշագրից 7 տարի անց, ԱՄՆ-ի պետքարտուղարին հղած «Նյու Յորք լայֆ»-ի՝ 1922 թ. նոյեմբերի 20-ի փոխնախագահի նամակը հաստատում է հետևյալը. «Կարող ենք նաև մատնանշել, որ մենք տեղեկացվել ենք, որ թուրքական կառավարությունը նպատակադրվել է բռնագրավել կամ քննարկման առարկա դարձնել հայերի կամ այլ կոտորված անձանց ապահովագրությունների պահանջահայցերի բռնագրավման խնդիրը, այն իմաստով, որ ինքը ստանա իր գոհերի կյանքի ապահովագրությունները»⁵⁰:

Այն, որ թուրքական կառավարությունը «քննարկում էր» բռնագրավման հարցը ապահովագրված հայերի անվանացուցակների պաշտոնական թուրքական պահանջը ստանալուց միայն 7 տարի անց, հստակ ցույց է տալիս, որ «Նյու Յորք լայֆ»-ից հայերի կյանքի ապահովագրման պայմանագրերի դիմաց փոխհատուցման գումարները ստանալու թուրքական փորձերն առնվազն մինչև 1922 թ. վերջերը անհաջողություն էին կրել: Փաստորեն, ընկերության արխիվներում հայտնաբերված ներքին օգտագործման համար նախատեսված հուշագիրը ցույց է տալիս, որ պատերազմի ավարտին ընկերությունը Թուրքիայում գրանցել է 258569 դոլարի գույք եկամուտ⁵¹: Հիշարժան է, որ այդ նույն ժամանակ ԱՄՆ-ը Թուրքիայի հետ առևտրական բանակցություններ էր վարում Լոզանում՝ Շվեյցարիայում, որը հաջողությամբ ավարտվեց երկու երկրների միջև կնքված պայմանագրով. այն չէր առնչվում հայերի կյանքի ապահովագրման պայմանագրերին:

«Իքուիթաբլ»-ը մեկ այլ ապահովագրական ընկերություն էր, որից նույնպես պահանջեցին տրամադրել իր ապահովագրած բոլոր հայերի անվանացանկը: Կ. Պոլսում նրա աշխատակից պրն. Միտրանին, անհանգստացած հայ պայմանագրատերերի անվանացանկի տրամադրումից սպասվելիք հետևանքներից, որդեգրեց ձգձգման մարտավարություն: Նա տեղեկացրեց թուրքական իշխանություններին, որ ինքը, նախքան պահանջի բավարարումը, պարտավոր է լիազորություն ստանալու համար նամակով կապվել գլխավոր գրասենյակի հետ: Բացահայտորեն շփոթված անսովոր պահանջից և իրազեկ՝ թուրքերի կողմից փոխհատուցման գումարները պահանջելու դեպքում ընկերությանը պատճառվելիք ֆինանսական հետևանքներին, նա դիմեց ԱՄՆ-ի դեսպանատուն՝ խորհրդի և օգնության համար: Պարզվեց, որ պահանջվող ցուցակներն արդեն գտնվում էին Կ. Պոլսի գրասենյակում, և թուրքական պահանջի բավարարման համար անհրաժեշտ էր գլխավոր գրասենյակի դրական պատասխանը, թերևս, ակնկալվող մեծ հետևանքների պատճառով: Գործերի ժամանակավոր հավատար-

⁵⁰ Բաքները պետքարտուղար Լանսինգին, 20 նոյեմբերի, 1922, էջ 3-4:

⁵¹ „Turkey, Egypt, and Miscellaneous Countries”, անթվակիր հուշագիր:

մատարը հավաստիացրեց աշխատակցին, որ ինքը կտեղեկացնի Նյու Յորքում «Իքուիթաբլ»-ի գրասենյակին այս անսովոր դեպքի մասին⁵²:

Պետքարտուղարության վավերագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ թուրքական կառավարությունը նշանակալի ջանքեր է թափել հայերի կյանքի ապահովագրման պայմանագրերի դիմաց վճարվելիք գումարները ստանալու համար: Պաշտոնական այս փորձերը սկսվեցին հայերի բռնագաղթից ինն ամիս անց: Ապահովագրված հայերի անվանացանկի տրամադրման պահանջը, որի նպատակը նրանց կյանքի ապահովագրման պայմանագրերի դիմաց վճարվելիք շահույթը ստանալն էր, վկայում է այն մասին, որ հայերի տեղահանության նպատակը նրանց ոչնչացումն էր:

Ապահովագրողները ոչ միայն հաջողեցին մերժել ապահովագրված հայերի ցուցակները տրամադրելու թուրքական պահանջները, այլև միջոցներ ձեռնարկեցին՝ հակահարված տալու աքսորված հայերի ապահովագրական պայմանագրերի դիմաց փոխհատուցումներ ստանալու թուրքական ջանքերին:

«Նյու Յորք լայֆ»-ը «Յունիոն Վի»-ն, մեկը մյուսից անկախ, գտան, որ Թուրքիան պետք է փոխհատուցի կյանքի ապահովագրման պայմանագրեր ունեցող ապահովագրված, բռնագաղթին զոհ գնացած հայերի ժառանգներին: Երկու ընկերություններն այդ փոխհատուցման պատասխանատվությունը փորձեցին դնել թուրքական կառավարության վրա: Երկու հսկա ապահովագրողները իրենց կրած վնասների վերականգման համար խնդրեցին իրենց կառավարությունների միջամտությունը՝ հարկադրելու Թուրքիային, որ նա հատուցի այդ վնասը:

Պետքարտուղարությանը հղած «Նյու Յորք լայֆ»-ի խնդրանքում ապահովագրված հայերի կոտորածը անմիջականորեն կապվում է թուրքական կառավարության հետ. «Նման անօրինական գործողությունների և այս անձանց կյանքը արդարադատության միջոցով պաշտպանելու թուրքական կառավարության ցանկության բացակայության հետևանքով, ընկերությունն իր ապահովագրածների՝ մշտապես իրականացվող նման դաժան մահվան հետևանքով, ծանր և բացառիկ վնասներ է կրել»⁵³:

«Նյու Յորք լայֆ»-ը վկայում է, որ մինչև 1922 թ. նոյեմբերի 20-ը հայերի կյանքի կորստի դիմաց ավելի քան 250 հազար դոլար է վճարվել: Նա փաստարկում էր, որ այս գումարը թուրքական կառավարության կողմից պետք է վճարվի իրեն⁵⁴:

Հենվելով այս պահանջի օրինականության վրա՝ «Նյու Յորք լայֆ»-ի փոխնախագահ Թ. Բաքները տեղեկացնում էր պետքարտուղարին, որ այն միակ ընկերությունը չէ, որ նման խնդիրներ ունի: Նա պատճառաբանում էր, որ բոլոր ապահովագրողների շարքերը միավորելու ամենաարդյունավետ ուղին կլինի

⁵² Ֆիլիպ Հոֆմանը՝ Կ.Պոլսում ամերիկյան գործերի ժամանակավոր հավատարմատարը, Նյու Յորքում «Իքուիթաբլ»-ի չորրորդ փոխնախագահ Հենրի Ռոզենֆելդին, 21 սեպտեմբերի, 1916թ., *U.S. National Archives, RG 84, file 850.6*.

⁵³ Բաքները պետքարտուղար Լանսինգին, 20 նոյեմբերի, 1922, էջ 1-2:

⁵⁴ Նույն տեղում, էջ 2:

Թուրքիային պատասխանատու ճանաչելը: Այս ծրագիրն իրականացնելու համար Բաքները պետքարտուղար Հյուգոյին գրում էր. «Նյու Յորք լայֆ»-ը նման իրավիճակում գտնվող միակ ընկերությունը չէ: «Լա Քոմֆանի Յունիոն» անվամբ հայտնի ֆրանսիական ապահովագրական ընկերությունը նույնպես գտնվում է նմանատիպ իրավիճակում:

...Սրա շնորհիվ թուրքական կառավարությունը կարող է սկզբունքորեն ճանաչել իր պատասխանատվությունը այս կարգի հարցերում, և այս սկզբունքի ճանաչումը կարող է հետագայում օգտակար լինել... թուրքական կառավարության գործողությունների հետևանքով «Նյու Յորք լայֆ»-ի կրած կորուստների վերականգման համար»⁵⁵:

Հավելվածը, «Յունիոն Վի»-ի՝ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության հետ 1922 թ. ապրիլի 11-ին ներկայացված նամակի թարգմանված պատճենը, շատ մանրամասն փաստաթուղթ է, որը վճռականորեն Թուրքիային պատասխանատու է ճանաչում՝ վճարելու իր ապահովագրված քաղաքացիներին սպանելու դիմաց. «Մենք կարիք չունենք այս կոտորածների բնույթը պնդելու: Դուք ավելի լավ գիտեք, քան մենք, թե ինչպես են դրանք կազմակերպվել և ինչպիսի վայրագությամբ իրականացվել, ոչ էլ անտեղյակ էք, թե ինչպիսի պատասխանատվություն է ընկնում օսմանյան կառավարության վրա... Մեր ապահովագրական պայմանագրերի ընդհանուր պայմանների 6-րդ հոդվածը վերապահում է, որ եթե այն անձը, որի կյանքը ապահովագրվել է, կորցնում է իր կյանքը դատական որոշման հետևանքով, ապահովագրությունը կորցնում է իր ուժը: Այդուհանդերձ, այն հավելում է, որ եթե առնվազն առաջին երեք տարիների ընթացքում ապահովավճարները վճարվել են, ընկերությունը մահվան դեպքում կտակառուներին է հատուցում ապահովագրված կապիտալի մաթեմատիկական պահուստը... Կարծում ենք, և դուք որոշակիորեն կհամաձայնվեք, որ այնտեղի օրենքով, տեղահանված և կոտորված հայերի դեպքում, որևէ դատական որոշում չի եղել»⁵⁶:

Ֆրանսիական ապահովագրողը պատճառաբանում էր, որ գոհերի իրավունքներն ամբողջապես արհամարհող օրինական պահանջների դիմաց վճարումներ իրականացնելու մերժումը կստեղծեր մղձավանջային հարաբերություններ, որը կարող էր, ի վերջո, վնասել իր առևտրական գործարքներին: Ֆրանսիական ապահովագրողն առաջին հերթին կարծում էր, որ ապահովագրական ընկերության առավելությունը որոշվում և չափվում է իր ապահովագրվածների օրինական պահանջների հարգման նրա անվիճելի կարողությամբ: Այս երկրնորանքը աներկբայորեն արտահայտվել էր «Յունիոն Վի»-ի պահանջում. «Կարո՞ղ ենք արդյոք, հենվել (6-րդ հոդվածի վրա) և չեղյալ հայտարարել ապահովագրումը: Մեծ ընկերության համար անվայել կլինի մերժել վճարումները:

Այդ պատճառով մենք խնդրում ենք, որ, օսմանյան կառավարության հետ կայացվելիք համաձայնություններով, հստակ սահմանվի ֆրանսիական ընկերու-

⁵⁵ Նույն տեղում, էջ 3:

⁵⁶ Բաքները պետքարտուղար Լանսինգին, 20 նոյեմբերի, 1922 (հավելված), էջ 3:

թյուններին հասցված վնասը վերականգնելու պարտավորության և պատասխանատվության սկզբունքը»⁵⁷:

1920-1923 թթ. Ս. Քեմալի ղեկավարած թուրքական ազգայնական շարժումն առաջացրեց ցեղասպանական գործողությունների իրականացման մի նոր ալիք: Նախօրոք կազմակերպված այս կոտորածներին զոհ գնացին գլխավորապես հույները և վերապրող հայերը: Այս շրջանում տեղի ունեցած սպանությունները նոր պահանջահայցերի պատճառ դարձան: Իրենց համապատասխան կառավարություններին հղած նամակներում ապահովագրողները պնդում էին, որ քեմալական շրջանում հայերի կյանքի կորստի դիմաց իրականացվելիք վճարումները պետք է լինեն թուրքական պատասխանատվության բաղկացուցիչ մաս: Փաստաթղթերը ցույց են տալիս, որ ապահովագրողները քաջատեղյակ էին, որ պատերազմի վերջում իթթիհադական վարչակարգի ոչնչացումից հետո ի հայտ եկած քեմալականների իրականացրած սպանությունները որևէ օրինական բնույթ չունենին, և որ այդ սպանություններն իրականացվել են ոչ համաձայն «դատական որոշման»: Այնուամենայնիվ, ապահովագրող ընկերությունները կասկածում էին, որ բարձրացող քեմալական ռեժիմը կարող է իր ստոր սպանությունների գործողությունները քողարկել օրինականության շղարշով և սպանությունները հռչակել որպես «քրեական պատիժ»⁵⁸: Ուստի, ֆրանսիական ապահովագրողները ստիպեցին իրենց կառավարությանը քեմալական վարչակարգի ընթացքում իրականացված ոճիրները՝ «անօրինական սպանությունները», նույնպես ընդգրկել թուրքական ողջ պատասխանատվության մեջ, որ պայմանավորված չի եղել «դատական որոշմամբ»:

«Սևրի պայմանագրի ստորագրումից սկսած, Փոքր Ասիայում տեղի ունեցած դեպքերի հետևանքով մեր պայմանագրատերերի մի բավական մեծ քանակություն, մեծ մասամբ հունական ծագումով, կամ կոտորածի, կամ էլ Անկարայի կառավարության կողմից ստեղծված զինվորական և քաղաքացիական իշխանությունների կողմից ընդունած որոշումներից հետո մահապատժի են ենթարկվել:

Մինչ պահս նման կարգի վնասներից միայն մի քանիսն են՝ մոտավորապես 160 հազար ֆրանկ արժեքի, մեզ ծանուցվել, բայց մենք երկյուղում ենք, որ նման պայմանների ներքո մեր պայմանագրատերերից շատերն են կորցրել իրենց կյանքը և առանց չափազանցության, կարելի է ենթադրել, որ մեզ մոտ ապահովագրվածների կյանքի դիմաց գումարը կհասնի, եթե չգերազանցի 500 հազար ֆրանկը: Ինչպես վերը նշվեց, մեր պայմանագրերի 6-րդ հոդվածը լիազորում է մեզ, հենվելով դատական որոշման վրա, կյանքի ապահովագրման պայմանագիրը համարել ուժը կորցրած:

Վստահ չենք, որ կհասնենք դատավարությունների, որոնց մենք ստիպված կլինեինք ապավինել, մեր պայմանագրերի 6-րդ հոդվածի պայմանների կիրառումը ապահովելու համար: Որոշման բնույթի մասին կարող են ավելի առարկումներ ծագել, քան որոշումը հայտարարող մարմնի ոչ իրավասությունից, այն հե-

⁵⁷ Նույն տեղում, էջ 3-4:

⁵⁸ Նույն տեղում, էջ 6-7:

ռանկարով, որ 6-րդ հոդվածը կիրառվում է խայտառակ բնույթի որոշման նկատմամբ»⁵⁹:

Ապահովագրական ընկերությունները ամեննին չէին ցանկանում իրենց իսկ շահի համար հղել 6-րդ հոդվածը վնասելով նպաստը ստացողներին: Քեմալական շրջանում իրականացված կոտորածներից բխող պահանջահայցերի դիմաց վճարումներ իրականացնելու մերժումը և խուսափումը, «Յունիոն Վի»-ի կարծիքով, «Եթե անգամ, դատարաններն ու հանձնաժողովները իրավասու են կիրառել 6-րդ հոդվածը, մենք մեզ երբեք չենք ենթարկի ծանր վնասի: Նման վնասը հետո կարող է դառնալ անբարոյական և լինել ավելի ծանր, քան նշված առաջինը: Նման որոշումը կարող է այս երկրի ժողովրդի վրա շատ վատ ազդեցություն թողնել՝ պատճառելով կյանքի ապահովագրման հեղինակագրկում, եթե ապահովագրվածների համար նման դեպքերում որևէ հաշվենկատության չափանիշ չբխի, ընկերությունը կենթարկվի պատվագրկման, որը օտար ընկերությունները կօգտագործեն իրենց շահի համար»⁶⁰:

Թուրքական պետության կողմից հովանավորված և իրականացված անօրինական սպանությունների վերաբերյալ ամերիկյան և եվրոպական ընկերությունների պնդումները հաստատում են վերջիններիս իրավացիությունը թուրքական, ամերիկյան և եվրոպական արխիվներից բազմաթիվ պաշտոնական փաստաթղթերի հայտնաբերմամբ:

Մինչև ապահովագրված հայերի սպանությունների մեջ թուրքական անմիջական մեղսակցությունից բխող պահանջահայցերը հիմնավորվում էին լայնածավալ փաստաթղթային ապացույցներով, ոճրագործների կողմից պայմանագրերի դիմաց նպաստների վճարման պատասխանատվության հարցը դեռևս չէր լուծվում: Արդյո՞ք Թուրքիայի իրականացրած՝ ապահովագրված հայերի անօրինական սպանություններն ազատում էին ապահովագրողներին ապահովագրվածների նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորություններից: Կամ, արդյո՞ք իր զոհերի արյան դիմաց փոխհատուցման Թուրքիայի պարտավորությունը վերաբերում էր նաև ապահովագրված զոհերի մահվան հետևանքով ապահովագրական ընկերությունների կրած պոտենցիալ վնասներին: Համանման նշանակություն ունեցող ժամանակակից իրավական նախադեպը կարող է օգտակար լինել՝ այս թվացյալ առեղծվածը բացահայտելու համար: Առաջին աշխարհամարտում գերմանական մարտական տորպեդով բրիտանական «Լուզիտանիա» նավի խորտակումը ապահովում է համարժեք պատմական նախադեպ, որը կարող է օգտագործվել թուրքական ֆինանսական պատասխանատվությունը հայցող ապահովագրողների պահանջի դեպքում:

1915 թ. մայիսի 7-ին բրիտանական մարդատար շոգենավ «Լուզիտանիան» կանխամտածված կերպով խորտակվեց գերմանական սուզանավից բաց թողնված մահաբեր տորպեդով՝ սպանելով 1198 մարդ: Ամերիկյան 128 զոհված քաղաքացիներից 10-ը ունեին 12 տարբեր ընկերություններից, ներառյալ «Նյու Յորք

⁵⁹ Նույն տեղում, էջ 6-6a:

⁶⁰ Նույն տեղում, էջ 7:

լայֆ»-ից և «Իքուիթաբլ»-ից ձեռք բերված կյանքի ապահովագրման 18 պայմանագրեր⁶¹:

ԱՄՆ-ի կառավարությունը, ներկայացնելով մեկ տասնյակից ավելի ապահովագրական ընկերությունների շահերը, ընդհանուր փոխհատուցման մեջ պատասխանատու ճանաչեց Գերմանիային՝ գանձելով նաև ամերիկյան կորուստների համար: Գերմանիան պատասխանատու էր նաև կյանքի ապահովագրման պայմանագրերի դիմաց վճարումների համար, որովհետև ամերիկյան ապահովագրողները նույնպես կորուստներ էին կրել: Գերմանիան չհամաձայնվեց: Դատական լսումները տեղի ունեցան Վաշինգտոնում և տևեցին մինչև 1924 թ.: Դատարանում նախագահում էր ամերիկյան դատավոր Էդվին Բ. Պարկերը:

Հանձնաժողովի ամերիկացի անդամ Չանդլեր Պ. Անդերսոնը ներկայացնում էր ԱՄՆ-ի կառավարությունը: Դատավարության ժամանակ նա նշեց, որ «մահվան դեպքում գործողության իրավունքը պատկանում է կորուստը հայցողին և ոչ թե վախճանվածին» և, որպեսզի «փոխհատուցման գումարը սահմանելիս գնահատվի նաև նրա մաս կազմող այն գումարը, «որը, եթե հանգուցյալը կենդանի լիներ, հավանաբար վճարելու էր հայցվորին»⁶²»: Նա նաև նշեց, որ համաձայն հանձնաժողովի վաղ դատավարությունների, «Գերմանիայի պատասխանատվությունը չի սահմանափակվում անձանց կամ սեփականությանը պատճառած վնասներով»⁶³: Նա առանձնակիորեն մեջբերեց հանձնաժողովի ընդունած հետևյալ որոշումը. «Բեռլինի պայմանագրով նախատեսված պահանջներից բացի, այլ պահանջների վերաբերյալ Գերմանիայի պատասխանատվությունը ԱՄՆ-ի նկատմամբ, իր քաղաքացիների անունից առաջ քաշեց ԱՄՆ-ը նկատի առնելով՝ ա. նրանց պատճառված մահը, վնասները և մարմնական վնասվածքները՝ ներառելով ամենուրեք գտնվող նրանց ունեցվածքի կորուստը, վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով հասցվել էին պատերազմի ընթացքում՝ Գերմանիայի կամ նրա գործակալների կողմից պատերազմ վարելու հետևանքով»⁶⁴:

Հանձնաժողովի գերմանացի անդամ դոկտոր Վիլհելմ Բախը չհամաձայնվեց ամերիկյան փաստարկին՝ պնդելով, որ ամերիկացիների կողմից մեջբերվող կետերը առնչվում են վնասների գումարին, այլ ոչ թե, առաջին հերթին, պահանջի օրինականությանը⁶⁵: Նա վիճարկում էր այն «զխավոր խնդիրը, թե արդյոք

⁶¹ Այս ապահովագրական ընկերություններն էին՝ «Փրովիդենթ մաթչուալ լայֆ ինշուրանս քոմփանի», «Մաթչուալ լայֆ ինշուրանս քոմփանի», «Փենն մաթչուալ լայֆ ինշուրանս քոմփանի», «Աեթնա լայֆ ինշուրանս քոմփանի», «Սթեյթ մատչուալ լայֆ ինշուրանս քոմփանի», «Նորթվեսթերն մաթչուալ լայֆ ինշուրանս քոմփանի», «Իքուիթաբլ լայֆ աշուրանս քոմփանի», «Մանհեթթեն լայֆ ինշուրանս քոմփանի», «Փրուդենթալ լայֆ ինշուրանս քոմփանի», «Մետրոպոլիտան լայֆ ինշուրանս քոմփանի», «Թրեվելերս ինշուրանս քոմփանի»: *Mixed Claims Commission, United States and Germany, Administrative Decisions and Opinions of a General Nature and Opinions in Individual Lusitania Claims and Other Cases to June 30, 1925* (Washington: GPO, 1925).

⁶² Նույն տեղում, էջ 104:

⁶³ Նույն տեղում, էջ 109:

⁶⁴ Նույն տեղում:

⁶⁵ Նույն տեղում, էջ 116:

ապահովագրված անձանց մահը վնաս է պատճառում պահանջահայցով հանդես եկող ապահովագրական ընկերությունների «սեփականությանը»:⁶⁶ Նա վիճարկում էր, որ որպես սեփականություն պետք է ըմբռնել նյութական իրերը, և որ պայմանագրային իրավունքները սեփականություն չեն հանդիսանում. «Առնվազն անսովոր կլինի ասել, որ պայմանագրային իրավունքները» «պատկանում են» անձին»⁶⁷: «Փոխհատուցումների բազմահատոր գործերում և ոչ մի տեղ, քանի որ դրանք յուրահատուկ են, գոյություն չունի պայմանագրային իրավունքների և հատկապես կյանքի ապահովագրական ընկերությունների իրավունքների դիմաց պահանջների հիշատակում»⁶⁸: «Խառը պահանջների հանձնաժողովի» դատավոր Էդվին Բ. Պարկերը իր 25 էջանոց որոշումը հրապարակեց հանձնաժողովի ամերիկյան և գերմանական անդամների կողմից իրենց տեսակետները ներկայացնելուց հինգ ամիս անց:

Դատավորը հետո վկայակոչեց ապահովագրման պայմանագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող և որպես պայմանագրային հատուկ կետեր օգտագործվող մի շարք աղետներ, որոնք բացառում են նման ռիսկերը. «կրաշարժից, հրդեհից, վարակիչ և տարածվող հիվանդություններից մահանալը պետք է լինի ապահովագրողի ծրագրում, ուստի, չնայած ամերիկյան գործակալության փաստարկին՝ վճարվի նրա դիմաց»⁶⁹:

Ճանաչելով պատերազմում ապահովագրողների վնասները՝ դատավորը հայտարարեց. «Մահվան դեպքում ապահովագրողը պարտավոր է պայմանագրում մատնանշված գումարը վճարել նպաստը ստացողներին,... ոչ թե այն պատճառով, որ վերջիններս վնաս են կրել, կամ մահվան հետևանքով վնաս է պատճառվել, այլ միմիայն այն պատճառով, որ նրանք պայմանագրով պարտավորված են մահվան դիմաց նման վճարումներ անել»⁷⁰:

Այս առումով կյանքի ապահովագրումը տարբերվում է դժբախտ պատահարների ապահովագրությունից: Դատավորը եզրակացրեց. «Ամերիկյան գործակալության այն վիճարկումը, որ պատերազմի հետևանքի ռիսկը չի եղել իրենց ծրագրում, որ նման ռիսկը երաշխավորելու համար բացարձակապես որևէ ապահովավճար չի գանձվել, որ ապահովագրողները անխուսափելիորեն պետք է վնասներ կրեն, եթե նրանք հարկադրվեն մահացածների դիմաց վճարել: Բայց ակնհայտ է, որ ապահովագրողների կնքած պայմանագրերի դիմաց վճարումների իրականացման ժամանակի արագացումը նվազեցնելու է նրանց իրական շահույթի ավելցուկը կամ սպասվելիքը: Այս պատճառով, կընդունվի, որ ապահովագրողներն այս առումով վնասներ են կրել»⁷¹:

⁶⁶ Նույն տեղում, էջ 110:

⁶⁷ Նույն տեղում, էջ 115:

⁶⁸ Նույն տեղում, էջ 116:

⁶⁹ Նույն տեղում, էջ 126:

⁷⁰ Նույն տեղում, էջ 135:

⁷¹ Նույն տեղում, էջ 127:

Պայմանագիրը բացահայտորեն պարտավորեցնում էր Գերմանիային՝ այն ամերիկյան քաղաքացիների խնամքի տակ գտնվողների վնասները փոխհատուցելու, որոնք մահացել էին պատերազմում իրականացված որևէ ռազմական գործողության հետևանքով: Պայմանագրում որևէ տեղ չէր շրջանառվում պատճառված մարմնական վնասների հետևանքով մահացած ամերիկյան քաղաքացիների կրած վնասների փոխհատուցման խնդիրը⁷²:

Դատավորը, նախքան դատավճռի հրապարակումը, նշեց, որ ապահովագրողների կողմից վնասների փոխհատուցման ռազմավարությունն ունեցել է բազմաթիվ նախադեպեր, որոնք բոլորն են ավարտվել են մերժմամբ. «Պատմությունը չի արձանագրում այս բնույթի պահանջահայցերի դիմաց մի պետության կողմից մյուսին վճարելու օրինակ... Ամերիկյան դատարանները, ներառյալ ԱՄՆ-ի Գերագույն դատարանը, մերժել են ապահովագրողների նման պահանջահայցերը...: ԱՄՆ-ի կառավարությունը այժմ չի կարող ճանաչել ամերիկյան ապահովագրողների» դեպքը սահմանում էր զոհերին փոխհատուցման երկակի պատասխանատվության գոյության գաղափարը: Սպանող ոճրագործը և սպանվածին ապահովագրողը կրում են անկախ իրավական և ֆինանսական պատասխանատվություն՝ սպանվածի ժառանգների նկատմամբ: Դա տեղի ունեցավ «Լուզիտանիայի» դեպքում, և ապահովագրվածների ժառանգները ստացան փոխհատուցումները: Մյուս կողմից, ոճրագործները, անկախ զոհերի կյանքի ապահովագրման կարգավիճակից, նյութապես պատասխանատու ճանաչվեցին՝ փոխհատուցելու զոհերի արյան դիմաց: *Դա յուրաքանչյուրը պատասխանատու է իր արածի համար* (res inter alios acta) սկզբունքի պարզ դրսևորումն է: Այս կանոնը «արգելում է անուղղակի փաստերի օգտագործումը սկզբունքային բնույթի վեճում»⁷³: «Լուզիտանիայի» դեպքում, կյանքի պայմանագրերի պահանջահայցերը հաստատեցին վեճի սկզբունքայնությունը, քանի որ գերմանական տորպեդով «Լուզիտանիայում» գտնվող ապահովագրվածների սպանությունը, ինչպես հայտարարեց ամերիկյան դատավորը, հաստատվում էր զուգահեռ ապացույցով:

Հայոց ցեղասպանության դեպքում, թուրքերի կողմից ապահովագրված հայերի սպանությունը, չնայած իր զանգվածային բնույթին, ապահովագրողների՝ իրենց ապահովագրած զոհերի ֆինանսական պարտավորությունների տեսանկյունից «անուղղակի փաստ» է, որը «Լուզիտանիայի» դեպքում սահմանեց «վեճի սկզբունքային բնույթը»: Անօրինական գործողությունները չեն ազատում ապահովագրողներին իրենց ապահովագրվածների նկատմամբ ստանձնած հիմնական պարտավորություններից: Ապահովագրողները, նույնիսկ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում, պարտավորված են իրենց և ապահովագրվածների միջև կնքված պայմանագրերով:

Այս աշխատության մեջ վերլուծված երկու գլխավոր նամակ-փաստաթղթերի ժամանակագրությունը պատմական շատ մեծ նշանակություն ունի: Այս երկու

⁷² Նույն տեղում, էջ 127, 132:

⁷³ Black's Law Dictionary, 5th ed., 1979.

նամակները, «Նյու Յորք լայֆ»-ի դեպքում՝ 1922 թ. նոյեմբերի 20-ով, իսկ «Յունիոն Վի»-ի դեպքում՝ 1922 թ. ապրիլի 11-ով թվագրված, համընկնում են շվեյցարական Լոզանում քեմալականների հետ ԱՄՆ-ի և եվրոպական դաշնակիցների միջև հաշտության պայմանագրի կնքման շուրջ ընթացող բանակցություններին: Այն նորոգելու էր ավելի վաղ՝ 1920 թ. օգոստոսի 10-ին, պարտված Թուրքիայի և հաղթող դաշնակից տերությունների միջև Սևրում (Ֆրանսիա) կնքված պայմանագիրը: Սևրի պայմանագիրը արդի Արևելյան Թուրքիայում գտնվող հայերի պատմական հայրենիքը ճանաչեց ազատ և անկախ պետություն: Այս առումով Սևրի պայմանագրի հատուկ հոդվածները ապահովում էին գոհված հայերի նյութական կորուստների փոխհատուցումը և անօրինական կերպով բռնագրավված ակտիվներն ու գույքը իրենց իրական տերերին վերադարձնելն ու վերականգնելը⁷⁴: Այնուամենայնիվ, Սևրի պայմանագիրը չէր պարունակում հատուկ իրավական և ֆինանսական պայմաններ՝ դաշնակիցների կյանքի ապահովագրման մեջ ընկերությունների կրած ընդհանուր կորուստների բաղկացուցիչ մաս համարելով կյանքի ապահովագրման պայմանագրերի դիմաց փոխհատուցումը: «Նյու Յորք լայֆ»-ը խնդրեց ԱՄՆ-ի պետքարտուղարությանը՝ սահմանել հայերի սպանության համար Թուրքիային պատասխանատու ճանաչող հատուկ հոդվածներ⁷⁵:

Մինչ «Նյու Յորք լայֆ»-ը պահանջում էր կյանքի ապահովագրման պայմանագրի դիմաց Թուրքիային պատասխանատու ճանաչող սկզբունքի պարտադրումը, ֆրանսիական ապահովագրական ընկերության՝ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության հետ ներկայացրած պահանջը ավելի յուրահատուկ էր և լավ մշակված: «Յունիոն Վի»-ն խնդրեց մի շարք հոդվածներով փոփոխել Սևրի պայմանագիրը՝ Թուրքիային պատասխանատու ճանաչելու ընկերության կրած կորուստների համար:

Գոյություն ունեցող Սևրի պայմանագիրը չունեւր ապահովագրողների ցանկությունը բավարարող առանձնակի հոդվածներ: Մինչ 142, 144 և 230 հոդվածները ճանաչում էին հայոց կոտորածների փաստը, իսկ 235, 236 և 287 հոդվածները բավարարում էին եղեռնի գոհերի ժառանգների ֆինանսական փոխհատուցումը, պայմանագրում բացակայում էին կյանքի ապահովագրման պայմանագրերով ենթադրվող կորուստներին թուրքական առնչությունը և դրանց դիմաց վճարման նրա պարտավորությունը⁷⁶:

Ֆրանսիական ապահովագրական ընկերությունը որոշակիորեն եզրակացնում էր, որ մարդկանց պատճառած վնասների, կյանքի կորստի կամ անձնական ունեցվածքի ընդհանուր համատեքստում, ինչպես և «Լուզիտանիայի» դեպքում, կյանքի պայմանագրերի դիմաց պահանջահայցերը վնասներ չհամարել: «Յունիոն Վի»-ն պատճառաբանում էր, որ Թուրքիայի դեմ դատական գործը, հիմնված Սևրի պայմանագրի գոյություն ունեցող հոդվածների վրա, չի կարող

⁷⁴ *Major Peace Treaties of Modern History, 1648-1967, vol. IV, New York, 1967, pp. 2055-2213.*

⁷⁵ Բաքները պետքարտուղար Լանսինգին, 20 նոյեմբերի, 1922, էջ 3:

⁷⁶ Նույն տեղում (հավելված), էջ 4:

հաղթանակ ապահովել. «Այս տեքստի առկայության պայմաններում մենք պետք է ակնկալենք տարբեր աղբյուրների վրա հիմնված մեր պահանջին օսմանյան կառավարության ընդդիմանալը: 1. Նա համառորեն պայքարելու է պահանջահայցերի մի մասի, եթե ոչ բոլորի դեմ. որ մեր կողմից ապահովագրվածների մահը եղել է օսմանյան իշխանությունների գործողության կամ անփութության հետևանք, և որ մեզ հաճախ շատ դժվար է լինելու հաստատել ապացույցը: 2. Գերիշխելու են այն արտահայտությունները, որ «անձանց ու նրանց պատճառած կորուստներն ու վնասը» չեն առնչվում այս գործին, քանի որ մեր *ունեցվածքը*, 287-րդ հոդվածին կցված բառի իմաստով, չի ենթարկվել որևէ վնասի կամ կորստի, և որ մեր ապահովագրած անձը որևէ կերպ չի կարող համարվել որպես մեր ունեցվածք: 3. Ի վերջո, գերիշխող է լինելու այն, որ այս գործի նկատմամբ պետք է կիրառվի մեր երկրի օրենսդրությունը, այսինքն, փոխհատուցումներն առնչվում են միայն ուղղակի վնասներին: Ընդունելով, որ կառավարության պատասխանատվությունը պետք է հաստատվի՝ ըստ իր իշխանությունների գործողությունների կամ անփութությունների, այն չի կարող անուղղակի վնասների վերականգման համար պատասխանատու ճանաչվել, քանի որ այն փաստը, որ կյանքի ապահովագրման պայմանագիրը կնքվել է դաշնակից տերություններին պատկանող ընկերության և հետագա կոտորածում մահացած հայի միջև, կառավարության մոտ սահմանում է «res inter alios acta» և չի կարող ավելի անբարենպաստ դրության մեջ հայտնվել, քան պայմանագիրը երբևէ գոյություն չունենալու դեպքում: Ուստի, 235-րդ հոդվածի տեքստը չի շնորհում մեր բացարձակ ճշմարտության իրավունքը: Այն ստիպելու է մեզ խրվել ձգձգվող և խճճված դատական գործերի մեջ, որի արդյունքը բացարձակապես պարզ չէ»⁷⁷:

«Յունիոն Վի»-ի՝ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությանը ներկայացրած նամակը հետապնդում էր Սևրի պայմանագրի 235-րդ հոդվածը ձևափոխելու նպատակ. «Մենք այն կարծիքին ենք, որ մեր շահերը անվտանգ կդարձվեն և՛ հայերի մահվան վնասների և քեմալականների կողմից նմանատիպ պատճառվածների նկատմամբ, եթե Դուք կարողանաք վերահաս նոր պայմանագրի մեջ մտցնել, 235-րդ հոդվածի առաջին պարբերությունից հետո, նոր կետ: Այդ կետը կարող է ստեղծվել այնպիսի պայմաններով, ինչպիսիք դուք հարմար եք գտնում, բայց մենք թույլտվություն ենք խնդրում Ձեզ ներկայացնել հայերի կոտորածներին առնչվող արդեն վերը մատնանշված մեր տեքստը՝ նաև քեմալականների պատճառած վնասների փոխհատուցման անհրաժեշտ բոլոր փոփոխություններով. այնպես, որ հոդվածում ընդգրկվի հետևյալը. «Օսմանյան կառավարությունը պատասխանատու է ճանաչվում փոխհատուցելու դաշնակից կամ գործակից տերություններին պատկանող կյանքի ապահովագրման ընկերություններին պատճառված վնասը՝ այս պատերազմում իրենց թուրքական պայմանագրատերերի մահվան պատճառով, և մինչ ներկա պայմանագիրն ուժի մեջ կմտնի, ելնելով այն տրամաբանությունից, որ նրանց մահվան պատճառը թուրքերի

⁷⁷ Նույն տեղում, էջ 5-6:

վատ վերաբերմունքն է՝ տեղահանումները, կոտորածը, մինչդեռ, օսմանյան կամ քեմալական իշխանությունները այդպիսիք իրագործելու դատական որոշումներ չունեն, և դրանց համար ապահովագրող ընկերությունները իրենց պայմանագրերի ուժը կորցնելու մասին համապատասխան վկայակոչում չունեն: Նման վնասը (կամ կորուստը) հավասար է լինելու երաշխավորված կապիտալի և ապահովագրական պայմանագրերի միջև տարբերությանը, ապահովագրվածի մահվան պահին նրա պայմանագրերում առկա մաթեմատիկական պահուստի գումարին»⁷⁸:

Ի վերջո, «Յունիոն Վի»-ն նախարարությանն ուղղած «Արժեթղթերի և կազմակերպության կորուստը» վերնագիրը կրող նամակում Թուրքիայից փոխհատուցում էր պահանջում իրենց արժեթղթերի և կազմակերպության «շատ ծանր ծախսեր պարունակող իրենց մասնաբաժնի վերականգնման» համար⁷⁹: Այնուհետև, պահանջը ի մի էր բերում թուրքական կառավարությունների սկզբում իթթի-հադականների, հետո քեմալականների՝ իրենց պատճառած վնասի համար վճարվելիք փոխհատուցումը հետևյալ հիմքերով. «1. Հայ պայմանագրատերերի կոտորածները: 2. Փոքր Ասիայում մեր պայմանագրատերերի նկատմամբ քեմալականների հրապարակած մահվան դատավճիռները: 3. Կ.Պոլսում մեր կազմակերպության գրասենյակի և արժեթղթերի կորուստը»⁸⁰:

Լոզանի պայմանագիրը ստորագրվեց 1923 թ. հուլիսի 24-ին: Նրանից դուրս նետվեցին հայերի նկատմամբ իրականացված բոլոր անարդարությունների վերաբերյալ ակնարկները՝ թողնելով միայն տեղահանության և կոտորածների գոհերի փոխհատուցման հարցը⁸¹: Փաստաթղթում կասկածելիորեն բացակայում էին «Հայաստան» և «հայ» բառերը: Ինչպես նկատել է Իվ Տերնոնը, այն. «ստեղծվել էր այնպես, որ կարծես թե հայերը գոյություն չեն ունեցել»⁸²:

Փոխարենը, 37-44 հոդվածները ընդհանուր կետերով առնչվում էին Թուրքիայում «ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքներին»: Պայմանագրում որևէ տեղ չէր տրվել հայերի զանգվածային սպանությունների և նրանց գույքի ու սեփականության դիմաց փոխհատուցման հարցին: Հայերի գոյության անտեսումը ծառայում էր ապահովագրողների և ոճրագործների երկուստեք շահերին: Պատերազմական հանցագործությունների դիմաց փոխհատուցման բացառումը ապահովագրական ընկերություններին թույլ էր տալիս մոռացության տալու պահանջահայցերը:

ԱՄՆ-ը չստորագրեց Լոզանի պայմանագիրը, քանի որ չէր պատերազմել Թուրքիայի հետ: Այնուամենայնիվ, 1923 թ. օգոստոսի 6-ին, Լոզանի պայմանագիրը ստորագրելուց երկու շաբաթ անց, Լոզանում Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև ստորագրվեց 32 հոդված պարունակող «Առևտրի և բարեկամության մասին

⁷⁸ Նույն տեղում, էջ 8:

⁷⁹ Նույն տեղում, էջ 9:

⁸⁰ Նույն տեղում:

⁸¹ *Major Peace Treaties of Modern History, 1648-1967, pp. 2301-68.*

⁸² *Yves Ternon, Histoire des Arméniens, Toulouse, 1982, p. 523.*

պայմանագիրը»⁸³: Այս պայմանագրով նույնպես չեղյալ էին հայտարարվում նախկին բոլոր պայմանագրերը, ներառյալ Սևրիին, և չէր արձարժվում հայերի ունեցվածքի և կյանքի ապահովագրման պայմանագրերի՝ վերականգնման ու փոխհատուցման խնդիրը:

«Առևտրի և բարեկամության պայմանագիրը» առնչվում էր միայն գործարարությանն ու առևտրին: Պայմանագիրը ստորագրվեց, երբ ԱՄՆ-ի նախագահն էր Կ. Կուլիջը: Պայմանագրի իմաստը զուգադիպում էր Կուլիջի տեսակետին և նրա հայտնի խոսքին. «Ամերիկյան ժողովրդի ամենագլխավոր բիզնեսը բիզնեսն է»: Այս մոտեցումը հատկապես կարևորվում է նրանով, որ «Նյու Յորք լայֆ»-ն իրեն համարում էր ԱՄՆ-ի գործընկերը և իրեն ընկալում որպես ԱՄՆ-ի անբաժանելի և բաղկացուցիչ մաս⁸⁴:

1929 թ. մայիսին, նախագահական պաշտոնավարությունից ընդամենը երեք ամիս անց, Կուլիջն ընտրվեց «Նյու Յորք լայֆ»-ի տնօրենների խորհրդի անդամ⁸⁵: Այս մասին ընկերության նախագահ Դ. Քինգսլիին հղած նամակում նա միանգամայն անտարբեր վերաբերմունք է արտահայտում բնակչության շահերի հանդեպ, որն ընկերությունը համարում է միակն ու անփոխարինելին:

Ամերիկյան համալսարանականները և քաղաքական գործիչները քրե-նադատության և բողոքի ձայն բարձրացրեցին «Առևտրի և բարեկամության պայմանագրի» ստորագրման դեմ: Գերմանիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ջ. Ջերարդի «Մենատը և Լոզանի պայմանագիրը» հողվածը լավագույնս է ներկայացնում այդ օրվա զգացմունքները: Նրանում ասվում է. ««Առևտրի և բարեկամության պայմանագիրը», որը ԱՄՆ-ը (1923 թ.) օգոստոսի 6-ին Լոզանում ստորագրեց Թուրքիայի հետ, պատվազրկում է Ամերիկան: Այն... արհամարհում է այն վեհ խոստումները, որոնք ամերիկյան պետական գործիչները տվել են հայ ժողովրդին և նշվածում իր մասնակցությամբ ճանաչում սպանությունը որպես կառավարության քաղաքականություն: Սա նվաստացուցիչ պայմանագիր է... Եթե մենք թուրքերի ձեռքից ընդունենք Լոզանի պայմանագրով առաջարկվող կեղծիքով հայթայթված արյունոտ փողերը, մենք կլինեք ստորացված և վարկաբեկված... Ամերիկայի պատիվը, բոլոր դեպքերում, Մենատից պահանջում է մերժել այն»⁸⁶:

Պայմանագրի ստեղծման տնտեսական դրդապատճառներին անդրադարձավ նաև ԱՄՆ-ի սենատոր Քինգը. «Թվում է, որ Լոզանի կոնֆերանսում մեր կառավարության մասնակցության նպատակը (նավթի) «Չեստերի կոնցեսիան» էր, և այդ

⁸³ Boyajian D., *Armenia: The Case for a Forgotten Genocide*, Westwood, New Jersey, 1972, pp. 268-81.

⁸⁴ Abbott, *The Story of NYLIC*, pp. 200-228.

⁸⁵ Նույն տեղում, էջ 213:

⁸⁶ D. Boyajian, նշվ. աշխ., էջ 478: Մեջբերումն ըստ՝ „The New Armenia, September-October, 1923”.

նպատակի իրականացման համար վճարված գինը... Հայաստանին դավաճանելն էր: Սա գուտ «դուլարի դիվանագիտություն է»⁸⁷:

Լոզանի պայմանագրով Հայոց ցեղասպանության ֆինանսական հետևանքները, մի կողմ թողնելով բարոյականը, գիտակցաբար անտեսվեցին միջազգային ասպարեզում: Ապահովագրողներն ու ոճրագործները, երկուստեք շահերը բավարարող և սեփական պաշտպանությունն ապահովելու գործողության համար նպաստավոր պայմանագիր հաջողելով, ստեղծեցին երկկողմ ֆինանսական շահերին և ոճրագործների անհանդուրժող ազգայնամոլությունը բավարարող ծառայություն:

Պայմանագրի հակասական բնույթը կրկին զգացվեց 1998 թ. հուլիսին, երբ շվեյցարական կառավարությունը մերժեց Թուրքիային՝ նշելու պայմանագրի 75-ամյակը⁸⁸: ԱՄՆ-ի սենատի կողմից «Առևտրի և բարեկամության պայմանագրի» վավերացման մերժումը, ի վերջո, ստիպեց Ֆ. Դ. Ռուզվելտին 1934 թ. հունվարի 12-ին հրաժարվելու պայմանագրից⁸⁹:

«Նյու Յորք լայֆ»-ն ու «Յունիոն Վի»-ն, իրենց հավաստմամբ, կյանքի ապահովագրման պայմանագրերի դիմաց վճարեցին՝ յուրաքանչյուրը պարտքերի 2 տոկոսը: Յուրաքանչյուր ընկերության կողմից 1915 թ. չվճարված 10 միլիոն դոլարը, ավելացրած ստացած տարեկան տոկոսային շահույթը, ներկայումս կազմում է 2 միլիարդ դոլար պարտք: Դա հիմնավորել է Մարտին Մարությանը՝ եղեռնը վերապրած քչերից մեկը, 1998 թ. «Նյու Յորք լայֆ»-ին ներկայացրած պահանջահայցում: Պահանջահայցը դեռևս ընթացքի մեջ է:

Այս աշխատության մեջ ներկայացված հայտնաբերումները 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը կդարձնեն առանձնահատուկ և յուրօրինակ, եթե այսօրվա կյանքի ապահովագրման պայմանագրերի իրավական ուժի հարցը չհամեմատվի ցեղասպանական այլ գործողություններից բխող կյանքի ապահովագրման պայմանագրերի դիմաց պահանջահայցերի հետ: Այդ համեմատությունը կարող է ապահովել նման պահանջահայցերի լուծման արդյունավետ և ընդունելի նախադեպեր ու իրական մեխանիզմներ: «Լուզիտանիայի» դեպքը պարզեց, որ ապահովագրողները պայմանագրի հողվածներով պարտավորված են փոխհատուցելու ապահովագրված զոհերի ժառանգներին՝ անկախ ոճրագործի պատասխանատվությունից: Զոհի կյանքի ապահովագրման պայմանագիրն ինքնին

⁸⁷ „A Resolution and Supporting Speech by Senator William H. King: The Lausanne Treaty and Chester Oil“, *Armenian Review*, Vol. 27, No. 105, (Spring 1974), pp. 87,90.

⁸⁸ *International Herald Tribune*, 23 June, 1998, p. 5. Լոզանի պայմանագրի 75-ամյակը նշելու մերժումը շվեյցարական կառավարության կողմից, դրդեց Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ջեմին Շվեյցարիայից հետ կանչելու իր դեսպան Թաներ Բայթոքին: Շվեյցարական կառավարությանն ուղղված խիստ նամակի մեջ, Բայթոքը մերժումը որակում էր որպես «վիրավորանք» և նախազգուշացնում շվեյցարական կառավարությանը «երկկողմ կապերի հետևանքների» մասին:

⁸⁹ *Dadrian V.*, „The Historical and Legal Interconnections between the Armenian Genocide and Jewish Holocaust: From Impunity to Retributive Justice“, *Yale Journal of International Law*, Vol. 23, No. 2 (Summer 1998), p. 514.

իրավունքի ուժ ունի, անկախ երրորդ կողմի անօրինական գործողություններից: Կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պայմաններն ու նպաստները կառավարվում և ղեկավարվում են ապահովագրողի և ապահովագրվածի միջև կնքված պայմանագրային պարտավորություններով:

Գերմանիան «փոխհատուցեց», չնայած խորհրդանշական չափերով, Ողջակիզման գոհերի արյան դիմաց: Ապահովագրողների դեմ պահանջահայցերով հանդես եկող վերապրող գոհերն ու ժառանգներն առաջնորդվում էին կյանքի ապահովագրման զգալի քանակությամբ պայմանագրերով: Այս պահանջահայցերը, սակայն, ավելի քան 50 տարի մնացին արհամարհված և մերժված: Անհատական հայցերը շարունակ մերժվում էին շվեյցարական, գերմանական, իտալական և ավստրիական ապահովագրական ընկերությունների կողմից: Հրեաների պահանջների մերժումը աստիճանաբար վերածվեց բազմաթիվ հրեական կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների միջև մղվող պայքարի: Շվեյցարական բանկերում կարճաժամկետ ամերիկյան դեպոզիտների սառեցման ու ԱՄՆ-ում բիզնեսով զբաղվելու եվրոպական արտոնագրերի չեղյալ հայտարարման սպառնալիքները հարկադրեցին ապահովագրողներին՝ հարգելու վերապրող գոհերի և ժառանգների իրավունքները:

Ողջակիզման շրջանի պահանջահայցերի վերաբերյալ ֆեդերալ բնույթի դատական հսկա գործ հարուցվեց ԱՄՆ-ում գործող եվրոպական 15 ապահովագրական ընկերությունների դեմ: Պահանջատերերին մերժել ուղղակի կվնասեր Ամերիկայում նրանց գործունեությանը: Ի վերջո, «Հրեաների փոխհատուցման համաշխարհային կազմակերպության» հովանու տակ գործող հրեական գլխավոր կազմակերպությունների ղեկավարները, եվրոպական 4 գլխավոր ապահովագրական ընկերությունները, Կալիֆորնիայի և Նյու Յորքի ապահովագրական հանձնաժողովականները համաձայնվեցին պահանջները լուծելու համար հիմնել միջազգային հանձնաժողով:

Նախատեղեռնի շրջանի՝ հայերի կյանքի ապահովագրման պայմանագրերի այժմյան օրինականության հարցը կարող է քննարկվել երկու տեսանկյունից: Առաջին, հարց է ծագում, թե արդյո՞ք պայմանագրերը օրինական են, քանի որ դրանք 85 տարուց ավելի է, ինչ մոռացված են: Երկրորդ, պե՞տք է քննարկել պայմանագրերով նպաստառուների հարցը, քանի որ ժառանգների մեծ մասը նույնպես մահացել է: Սակավաթիվ վերապրողները ութսունամյա են, և չկա երաշխիք, որ կվերապրեն երկարատև դատական գործընթացը:

Ողջակիզումը վերապրողների դեպքն ապահովում է այն ակնհայտ օրինակը, որ մոռացության մատնված լինելը ուղղակիորեն չի իրավազրկում պայմանագիրը: Մոռացված լինելու հարցը բազմակիորեն քննարկվել և վերլուծվել է Ողջակիզումից հետո: Չնայած ապահովագրողների կողմից Ողջակիզման պահանջահայցերից նախապես խուսանավելը և մերժելը մասամբ անհատ պահանջատերերի թուլության և վարչարարության պատճառով էր, սակայն միաջազգային ատյանների և Գերմանիայի կողմից Ողջակիզման դատապարտումը նպաստավոր և կառուցողական մթնոլորտ ապահովեցին նման դատավեճերի լուծման համար:

Հայոց եղեռնը տարբերվում է Ողջակիզումից՝ ֆինանսական փոխհատուցման և պատժիչ արդարադատության բացակայությամբ: Թուրքական ռազմական դատարանների կողմից Հայոց ցեղասպանությունը նյութող ոճրագործների դատապարտումը և Սևրի պայմանագրով կարգավորվող՝ զոհերի նյութական փոխհատուցման հարկադրանքը դեն նետվեց Լոզանի պայմանագրից: Հայոց ցեղասպանությունը քաղաքական նպատակահարմարության և սեփական շահերի պատճառով երկար ժամանակ մնաց չճանաչված: Դրա հետևանքով, հայերը զոհերի արյան և իրենցից ապօրինի բռնագրավված ունեցվածքի, գույքի, բանկային հաշիվների դիմաց գրոշ անգամ չստացան: Կյանքի պայմանագրերի դիմաց վճարվելիք նպաստների 98 տոկոսը մնաց չպահանջված և չվճարված: Այս հիվանդագին միտումն, այնուամենայնիվ, այսօր փոխվում է, մասամբ շնորհիվ մեծ քանակությամբ փաստաթղթային ապացույցների հրապարակման, քանի որ ցեղասպանության ճանաչումն ընթացք է ստանում⁹⁰:

Պահանջները մոռացության մատնելը բացատրվում է երկու կարևոր և որոշիչ գործոններով: Գոյություն չունեղ զոհերին փոխհատուցում երաշխավորող միջազգայնորեն սահմանված պայմանագիր: Անկախ հայկական պետությունը կլինեղ միջազգային ատյաններում պայմանագրերի դիմաց պահանջների հետապնդման ամենաարդյունավետ և օրինական մարմինը: Բայց Արևելյան Հայաստանը սոսկ Խորհրդային Միության մասն էր, իսկ խորհրդային վարչակարգը հրաժարվում էր հայերի ազգային պահանջներից: Հակառակը, նա համագործակցում էր Թուրքիայի հետ և քաղաքական նպատակներից ելնելով՝ միացել էր Լոզանի պայմանագրին⁹¹:

Թուրքիայում նախացեղասպանության շրջանի հայերին պատկանող կյանքի ապահովագրման տասնյակ հազարավոր պայմանագրերի գոյության փաստաթղթերը և ցեղասպանությունից հետո այս պայմանագրերի իրավական ուժի մեջ լինելու խնդիրը այս հետազոտության գլխավոր հայտնաբերումներն են: «Եղու Յորք լայֆ»-ի դեմ ընթացիկ դատական գործը պարզապես հուշում է նման գործերի արդիական օրինականությունը և ճշմարտացիությունը: «Տեղահանված» հայերի կյանքի պայմանագրերի դիմաց շահույթներ ստանալու փաստերով ապացուցված թուրքական կառավարության փորձերը հաստատում են, որ «տեղահանությունը» «մահվան» հոմանիշ էր: Ապահովագրողների կողմից մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար Թուրքիային պատասխանատու ճանաչելու հակապահանջահայցերը օրինական են, և այդ փաստը վերահաստատվում է մի նոր սկզբնաղբյուրով: Ի վերջո, Առաջին աշխարհամարտում խորտակված «Լուզիտանիայի» դեպքը և ապահովագրողների Գերմանիային պատասխանատու ճանաչելու անհաջող հայտը, ապահովագրողների կողմից իրենց հաճախորդների նկատմամբ ունեցած պարտավորությունների կտակն է: Չնայած ապահովագրողներն ու ոճրագործները նման դեպքերում երկուստեք պատասխանատու են, Լոզանի պայմանագիրը երկու կողմերի համար էլ ճանապարհ հարթեց խուսա-

⁹⁰ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը: Տե՛ս *Shavarsh Toriguan, The Armenian Question and International Law*. 1998թ.

⁹¹ *Boyajian, Armenia: The Case for a Forgotten Genocide*, p. 268-281.

փելու գոհերի նկատմամբ իրենց ունեցած ֆինանսական և իրավական պարտավորություններից: Պայմանագիրն այնուհետև օգնեց ապահովագրողներին և Թուրքիային՝ թաքցնելու փաստերը և իրավականորեն ամրագրելու անպատժելիությունը՝ ստեղծելով արտասովոր՝ եկամուտը բացասող ախտանիշ: Սրանում առկա է եկամուտ՝ բացասման, և բացասում՝ եկամտի մեջ: Այսօր նախացեղասպանության շրջանի կյանքի ապահովագրման պայմանագրեր ունեցող հայերի անվանացանկը և թվակազմը մնում են անհայտ, իսկ Թուրքիայում Հայոց ցեղասպանության մասին խոսելն ու դրա մասին գրելը պատժվում է օրենքով⁹²:

Նախացեղասպանության շրջանի կյանքի պայմանագրերն այսօր դատարանում քննելը նշանակալից է պատմական և իրավական տեսանկյունից: Այն պնդումը, թե հայերի դատական գործը կարող է որակվել որպես ուժը «կորցրած»՝ մոռացության տրված լինելու պատճառով, անհիմն է: Երբ XIX դ. կեսին խորտակված «Կենտրոնական Ամերիկա» նավի բեռը վերջերս փրկվեց, ապահովագրական ընկերությունները կարողացան փոխհատուցել այն գումարները, որ նրանք վճարելու էին այդ նավի վրա գտնվող ապահովագրված ոսկու դիմաց⁹³: Ցանկալի կլինի, որպեսզի պահանջների ներկա հետապնդումը իրականացվի պետական հովանավորությամբ՝ ընդգրկելով վեց իրար հաջորդող հետևյալ քայլերը՝ 1. Հայաստանի Հանրապետության հովանու ներքո Հայ պահանջատերերի միջազգային ասոցիացիայի հիմնումը: Եկամուտ չհետապնդող և ապաքաղաքականացված ասոցիացիան պետք է ընդգրկի հայկական բոլոր կրոնական, բարեգործական, մշակութային և կրթական կազմակերպությունների ներկայացուցիչների: 2. Ասոցիացիայի կողմից միջազգային իրավունքի փորձագետներից և պատմաբաններից բաղկացած կոմիտեի ստեղծում՝ այս գործը քաղաքացիական արդարադատության համակարգում հետապնդելու համար: 3. Նախքան Առաջին աշխարհամարտը Թուրքիայում գործունեություն ծավալած կյանքի ապահովագրման եվրոպական և ամերիկյան բոլոր ընկերությունների արխիվների մանրակրկիտ ուսումնասիրություն: 4. Եվրոպական և ամերիկյան ընկերությունների կողմից ապահովագրված այն բոլոր հայերի անվանացանկերի ստեղծումը, որոնց պայմանագրերը դեռևս հայցված չեն: 5. Ներկա արժեքներից բխող՝ յուրաքանչյուր ապահովագրական ընկերության պատասխանատվության սահմանումը: 6. Փոխհատուցվող գումարը վերապրող ժառանգներին բաշխելը, իսկ եթե կենդանի չեն մնացել, ողջ գումարը ծախսել հայկական բարեգործական և նպաստամատույց ծրագրերի վրա, ներառյալ գիտահետազոտական և կրթական նպատակները, Հայոց ցեղասպանության հուշաթանգարանին տրամադրելը:

Այս պահանջներն առաջադրելիս, պետք է հիշել, որ ապահովագրական ընկերությունները թաքցրել են այն ապահովագրված հայերի անունները, որոնք ոչնչացվել են կոտորածների և աղետալի արշավանքների ժամանակ:

Պատահական չէ, որ 1930 թ. «Նյու Յորք լայֆ»-ը՝ զարմացրեց աննախադեպ հաջողությամբ: Էբրթն իր գրքում տեղեկացնում է. «Այս էջերը թերթելով՝ կարդա-

⁹² *New York Times*, 14 June, 1998.

⁹³ *Gary Kinder, Ship of Gold in the Deep Blue Sea, New York, 1998, pp. 499-505.*

ցողը կիմանա այն, որ ավելի քան 80 տարվա ընթացքում «ՆՅԼԱԸ»-ը 50 հազար դոլարից գերաճել է 1 միլիարդ 6 հարյուր միլիոն դոլար կապիտալ ունեցող հաստատության. աճ՝ 30 հազար անգամ կամ 3 միլիոն տոկոսով»⁹⁴:

«Վերջերս հայտարարվեց, որ չվճարված խոստումների համարժեք գումարը կազմում է 100 000 000 000 դոլար...

Կյանքի ապահովագրությունը իրականում խաղաղ սոցիալական հեղափոխություն է: Այն նոր ձևի և նոր ոլորտում ժողովրդավարություն է. այն կողմերի միջև արդարացի համագործակցության նոր ճանապարհ է, որը ներկայացնում է աշխարհում բոլոր իրական արժեքները»⁹⁵:

Կյանքի ապահովագրման պայմանագիր կնքելը նշանառության տակ առնված գոհերի համար ուներ անվտանգության նշանակություն: Դժբախտությունն այն է, որ «Նյու Յորք լայֆ»-ը իր իրական հաճախորդներին հրապուրելու և հորդորելու որոնումներում, նրանց ողողեց նմանատիպ կարգախոսներով և սկզբունքներով, իսկ հետո դրժեց իր երդումը: «Նյու Յորք լայֆ»-ի դեմ վերահաս դատական գործը բնական է և սպասում է իր զարգացմանը, հատկապես, երբ պայմանագիրը խախտվում կամ մերժվում է: Օրինական ուժ ունեցող կյանքի ապահովագրման պայմանագրերի համընդհանուր բացասումը չի վերացնում նրանց իրավական և օրինական ուժը:

⁹⁴ Նույն տեղում, ներածություն:

⁹⁵ Նույն տեղում, էջ 327: